

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2

18.04.2022թ. կնքված՝ «Ձեռնարկատեր + Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» ՓԲԸ-ի կարիքների համար աուդիտորական ծառայությունների մատուցման N 27ՀՆԿ-ԳՀԾՁԲ-22/2 պայմանագիրը փոփոխելու մասին

ք. Երևան

«20» հունիսի 2022թ.

«Ձեռնարկատեր + Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Մանուկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 18.04.2022թ. կնքված թիվ 27ՀՆԿ-ԳՀԾՁԲ-22/2 պայմանագրի 7.6 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով, կողմերը որոշեցին, Պայմանագրի թիվ 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել մինչև 2022թ. հունիսի 30-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրով չնշված, սակայն Պայմանագրով սահմանված Կողմերի բոլոր իրավունքներն ու պարտավորությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Ձեռնարկատեր + Պետություն հակաճգնաժամային
ներդրումների կառավարիչ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 37
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570062088030100
ՀՎՀՀ 02697868
Տնօրեն՝
Բ. Մանուկյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի
փողոց, 9 շենք
«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510045103850100
ՀՎՀՀ 00040569
Տնօրեն՝
Ա. Հովհաննիսյան

